

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-ԻՆ
ԺԱՄԸ 10:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ԿԱՆԱՆՑ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

խորհրդի անդամներ՝

Հ. Նաղդալյան	ՀՀ ԱԺ-ի նախագահի տեղակալ (համաձայնությամբ)
Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ
Կ. Մինասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Կ. Հարությունյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Ռ. Ալավերդյան	ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ
Զ. Բաղդասարյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Է. Հայրիրյան	ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով պալատի դատավոր
Կ. Սուջյան	ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի մարդու իրավունքների և հումանիտար հարցերի բաժնի պետ
Գ. Սողոմոնյան	Երևանի քաղաքապետարանի կրթության վարչության պետ
Լ. Մուրադյան	ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ
Ա. Թովուզյան	Հայաստանի կանանց հանրապետական խորհրդի նախագահ

Ջ. Հասարթյան	«Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Գ. Հայրապետյան	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի գործադիր ներկայացուցիչ
Ա. Խուդոյան	«Հրապարակում» հեռուստատեսային ծրագրի ղեկավար
Ն. Մարտիրոսյան	«Միկա ցեմենտ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
Գ. Արմաղանովա	Առողջապահության աշխատողների արհմիությունների հանրապետական կոմիտեի նախագահ (համաձայնությամբ)
Ա. Միրզախանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ (խորհրդի քարտուղար)

Հրավիրվածներ՝

Ֆ. Բերիկյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Ա. Բակունց	ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ներկայացուցիչ
Ա. Այվազով	UNICEF-ի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ
Հ. Ալեքսանյան	UNICEF-ի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ
Ն. Ավետիսյան	Եվրոպական խորհրդի երևանյան գրասենյակի ներկայացուցիչ
Մ. Պողոսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության փորձագետ

1. ՀՀ վարչապետին կից կանանց հարցերով խորհրդի վերաբերմունքը «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի և «գենդեր» տերմինի շուրջ ձևավորված իրավիճակի նկատմամբ

(Հ. Նաղդալյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ ՀՀ վարչապետին կից Կանանց խորհրդի հայտարարության տեքստի վերջնական խմբագրված տարբերակին և այն տեղադրել ՀՀ կառավարության համապատասխան կայք-էջում.

2) մասնակցել ՀՀ ԱԺ-ի կողմից կազմակերպվող հանրային լսումներին և ըստ անհրաժեշտության ներկայացնել համապատասխան առաջարկներ:

2. «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի շուրջ ծավալվող քննարկումների՝ պատշաճ մակարդակով կազմակերպման և (կամ) մասնակցության մասին

(Ա. Խուդոյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

ընդունել ի գիտություն «Հրապարակում» հեռու-տատեսային ծրագրի ղեկավար Ա. Խուդոյանի առաջարկը և ԶԼՄ-ների միջոցով հնարավորինս մեծացնել «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի մեկնաբանման լուսաբանումը:

3. Գենդերային ուսուցման հիմնախնդիրների մասին

(Կ. Հարությունյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

ընդունել ի գիտություն ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Կ. Հարությունյանի զեկուցումը՝ գենդերային ուսուցման հիմնախնդիրների մասին:

4. Այլ հարցեր

4.1 ՀՀ վարչապետի 2014 թվականի

- «Լավագույն համայնքապետ՝ գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ»,
- «Լավագույն կին-գործարար»
- «Լավագույն լրագրող՝ գենդերային հիմնահարցերի լուսաբանման գործում»

մրցանակաբաշխությունների կազմակերպման հարցերի մասին

(Վ. Տերտերյան, Կ. Մինասյան, Ա. Խուդոյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն՝

1) ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանի զեկուցումն այն մասին, որ 2014 թվականի մարտ-ապրիլ ամիսներին կանցկացվի ՀՀ վարչապետի 2014 թվականի մրցանակաբաշխությունը «Լավագույն համայնքապետ՝ գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ»:

2) «Լավագույն կին-գործարար» և «Լավագույն լրագրող՝ գենդերային հիմնահարցերի լուսաբանման գործում» անվանակարգերի գծով մրցույթն ու մրցանակաբաշխությունը կիրականացվի 2014 թվականի մարտ-ապրիլ ամիսներին:

- 4.2. «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի համաձայն ներկայացվող ՀՀ 5-րդ և 6-րդ զեկույցի նախապատրաստման գործընթացի և նախնական արդյունքների մասին

(Կ. Սուջյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն ՀՀ արտաքին գործերի

նախարարության աշխատակազմի մարդու իրավունքների և հումանիտար հարցերի բաժնի պետ Կ. Սուջյանի տեղեկացումը՝ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի համաձայն ներկայացվող ՀՀ 5-րդ և 6-րդ զեկույցի նախապատրաստման աշխատանքների կատարման ընթացքի մասին:

- 4.3. Գենդերային հավասարության ազգային մեխանիզմի վերաբերյալ միջազգային պահանջներին համապատասխան Կանանց խորհրդի ձևափոխման գործընթացի մասին

(Ա. Այվազով, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն ՄԱԿ-ի հայաստանյան

գրասենյակի ներկայացուցիչ Ա. Այվազովի տեղեկացումը՝ Գենդերային հավասարության ազգային մեխանիզմի վերաբերյալ միջազգային պահանջներին համապատասխան Կանանց խորհրդի ձևափոխման գործընթացի մասին:

- 4.4. «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» քարոզարշավի կազմակերպչական /կոորդինացիոն/ մոնիթորինգի հարցերի մասին

(Գ. Հայրապետյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի գործադիր ներկայացուցիչ Գ. Հայրապետյանի զեկուցումը՝ «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» քարոզարշավի կազմակերպչական (կոորդինացիոն) մոնիթորինգի հարցերի մասին:

- 4.5. 2015 թվականը «Ընտանիքի տարի» հայտարարելու մասին

(Ա. Թովուզյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ Ա. Միրզախանյանին՝ ձևավորել աշխատանքային խումբ, մշակել 2014 թվականը «Ընտանիքի տարի» հայտարարելու միջոցառումների ծրագիր և այն ներկայացնել ՀՀ կառավարության քննարկմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ